



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՑՈԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 17(437) «09» հուլիսի 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ	
407	«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-75-Ն օրենքը.....	.
408	«Քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-76-Ն օրենքը.....	.
	ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ	
409	«Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 17-ի ՆՀ-884-Ն հրամանագրում լրացում կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-2466-Ն հրամանագիրը.....	.
410	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրում լրացում կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-2467-Ն հրամանագիրը.....	.
	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
411	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 28-ի N 94 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 700-Ն որոշումը.....	.
412	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 701-Ն որոշումը.....	.
413	«2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) և անհայտ բացակայող ճանաչված անձանց ընտանիքների, 1-ին խմբի անժամկետ հաշմանդամ ճանաչված և (կամ) անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովման ծրագիրը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 705-Ն որոշումը.....	.
414	«Արցախի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 715-Ն որոշումը.....	.
415	«Պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 716-Ն որոշումը.....	.

416	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի N 556 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 717-Ն որոշումը.....	.
417	«Աշխատանքային օրը տեղափոխելու մասին» ԱՀ կառավարության N 729-Ն որոշումը.....	.
ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
418	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի N 139 հրամանը.....	.
419	««ԱՐՏ-ԱԼԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2018 թվականի մարտի 1-ին տրված ՊԼ-0366 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ ֆինանսների նախարարի N 20 հրամանը.....	.
420	««ՊԻԱՆԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը լիցենզիա տրամադրելու մասին» ԱՀ ֆինանսների նախարարի N 21 հրամանը
421	««ՄԻԿԱ-ՀԱԴԲՈՒԹ» փակ բաժնետիրական ընկերությանը 2003 թվականի հունիսի 21-ին տրված ՊԼ-0065 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ ֆինանսների նախարարի N 29 հրամանը

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
հունիսի 29-ին

«ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» 2018 թվականի դեկտեմբերի 20-ի ՀՕ-81-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին կետ.

«7.1) ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց կողմից գույքն օգտագործման տրամադրելու հատուկ կարգի ու պայմանների սահմանում.»,

2) 15-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 16-րդ կետ.

«16) անհրաժեշտության դեպքում ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց գույքի օգտագործում՝ սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգերին ու պայմաններին համապատասխան:»:

Հոդված 2. Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին հոդված.

«Հոդված 8.1. Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց գույքի օգտագործումը

1. Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում ռազմական դրությամբ պայմանավորված խնդիրները լուծելու նպատակով կարող է օգտագործվել նաև ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց գույքը (բացառությամբ դրամական միջոցների, արժեթղթերի և գույքային իրավունքների), եթե Արցախի Հանրապետության տիրապետության ներքո գտնվող համապատասխան գույքը բավարար չէ: Ընդ որում, գույքի անբավարարությունը գնահատվում է նաև հաշվի առնելով կոնկրետ իրադրությունը, խնդրի հրատապությունը, գույքի գտնվելու վայրը և էական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

2. Ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց գույքի օգտագործման անհրաժեշտություն առաջանալու դեպքում Արցախի Հանրապետության նախագահի կողմից լիազորված մարմինը (մարմինները) (այսուհետ՝ լիազորված մարմին (մարմիններ)) կամ լիազորված մարմնի (մարմինների) ղեկավարը (ղեկավարները) կամ նրա (նրանց) կողմից այդ նպատակով լիազորված պաշտոնատար անձը (անձինք) (այսուհետ՝ իրավասու պաշտոնատար անձ (անձինք)), Արցախի Հանրապետության նախագահի կողմից սահմանված լիազորությունների շրջանակներում, առաջարկում են գույքի սեփականատիրոջը կամ բացառիկ դեպքերում, երբ գույքի սեփականատերը և (կամ) նրա գտնվելու վայրը հայտնի չէ՝ գույքի օրինական տիրապետողին (այսուհետ՝ գույքի օրինական տիրապետող)՝ գույքը Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված վճարի դիմաց օգտագործման նպատակով տրամադրել լիազորված մարմնին (մարմիններին):

3. Առաջարկությունը ներկայացնելիս գույքի օրինական տիրապետողին

ներկայացվում է անհրաժեշտ գույքը (գույքի անվանումը, անհատականացնող հատկանիշները, անշարժ գույքի դեպքում՝ գտնվելու վայրը), գույքի օգտագործման անհրաժեշտության հիմնավորումը և նպատակը (եթե դրանք գաղտնի չեն), գույքի օգտագործման դիմաց վճարելու և գույքը վերադարձնելու (անհնարինության դեպքում՝ փոխհատուցելու) Արցախի Հանրապետության պարտականությունը, ինչպես նաև նախագգուշացում այն մասին, որ կամավոր չհանձնելու դեպքում գույքը կարող է վերցվել հարկադիր կարգով: Առաջարկությունը կից ներկայացվում է առաջարկությունը ներկայացնող պաշտոնատար անձի նման լիազորությունը հավաստող փաստաթուղթը:

4. Առաջարկությունը ներկայացվում է գրավոր, իսկ հրատապության դեպքում կարող է ներկայացվել նաև բանավոր (այդ թվում՝ կապի միջոցներով): Գրավոր առաջարկի դեպքում այն հանձնվում է գույքի օրինական տիրապետողին առձեռն, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ուղարկվում հաշվառման (գտնվելու) վայրի հասցեով: Առաջարկում (բանավոր և գրավոր) սահմանվում է պատասխան ներկայացնելու ողջամիտ ժամկետը, իսկ գրավոր առաջարկում՝ նաև ձևը:

5. Գույքի օրինական տիրապետողի համաձայնության դեպքում իրավասու պաշտոնատար անձը կազմում է գույքի կամավոր հանձնման վերաբերյալ արձանագրություն, որը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկությունները.

- 1) գույքի (նաև դրա վիճակի) հնարավորինս ամբողջական նկարագիրը.
- 2) գույքի գտնվելու վայրը.
- 3) լիազորված մարմին հանձնելու եղանակը, վայրը և ժամանակը.
- 4) գույքն օգտագործելու նպատակը (եթե այն գաղտնի չէ).
- 5) գույքի օրինական տիրապետողի տվյալները՝ անունը, ազգանունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.
- 6) արձանագրությունը կազմողի անունը, ազգանունը և պաշտոնը.
- 7) արձանագրությունը կազմելու ժամանակը, վայրը.
- 8) գույքն օգտագործման վերցնելու գործողությանը մասնագետ ներգրավելու դեպքում մասնագետի անունը, ազգանունը և ստորագրությունը.
- 9) նշում սույն հոդվածի 17-րդ մասով սահմանված կարգի մասին:

6. Գույքը լուսանկարվում և տեսաձայնագրվում է անհրաժեշտության դեպքում արձանագրողի կամ գույքն օգտագործման վերցնելու գործողությանը ներգրավված մասնագետի կողմից գույքի որակական ու քանակական հատկանիշների վերաբերյալ մեկնաբանություններով, որի մասին նշում է կատարվում արձանագրության մեջ (լուսանկարները և տեսանյութը պահպանվում են մինչև գույքի վերադարձը):

7. Արձանագրությունը կազմվում է երկու օրինակից, ստորագրվում է այն կազմող իրավասու պաշտոնատար անձի և գույքը կամավոր հանձնելու համաձայնություն տված օրինական տիրապետողի կողմից, որին տրամադրվում են արձանագրության մեկ օրինակը, ինչպես նաև գույքի լուսանկարները և տեսանյութը:

8. Գույքը կամովին հանձնելուց հրաժարվելու դեպքում գույքը կարող է օգտագործման վերցվել հարկադիր կարգով՝ լիազորված մարմնի (մարմինների) պատճառաբանված որոշման հիման վրա: Ընդ որում, սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված առաջարկով սահմանված ժամկետում որևէ դիրքորոշում չներկայացնելը համարվում է գույքը կամովին հանձնելուց հրաժարում:

9. Գույքը հարկադիր կարգով օգտագործման վերցնելու վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը պետք է պարունակի՝

- 1) գույքի (նաև դրա վիճակի) հնարավորինս ամբողջական նկարագիրը.
- 2) գույքի գտնվելու վայրը.
- 3) գույքի օրինական տիրապետողի տվյալները՝ անունը, ազգանունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.
- 4) գույքի օրինական տիրապետողին սույն հոդվածով սահմանված

կարգով առաջարկ ներկայացնելու և վերջինիս կողմից գույքը կամովին հանձնելուց հրաժարվելու մանրամասները.

5) գույքը վերցնելու եղանակը և ժամանակը.

6) գույքն օգտագործելու հիմնավորումը և նպատակը (եթե դրանք գաղտնի չեն).

7).արձանագրությունը կազմողի անունը, ազգանունը, պաշտոնը և ստորագրությունը.

8) արձանագրությունը կազմելու ժամանակը, վայրը.

9) գույքը հարկադիր կարգով օգտագործման վերցնելու գործողությանը մասնագետ ներգրավելու դեպքում մասնագետի անունը, ազգանունը և ստորագրությունը.

10) նշում սույն հոդվածի 17-րդ մասով սահմանված կարգի մասին:

10. Գույքը լուսանկարվում և տեսաձայնագրվում է՝ անհրաժեշտության դեպքում արձանագրողի կամ գույքը հարկադիր կարգով օգտագործման վերցնելու գործողությանը ներգրավված մասնագետի կողմից գույքի որակական ու քանակական հատկանիշների վերաբերյալ մեկնաբանություններով, որի մասին նշում է կատարվում արձանագրության մեջ (լուսանկարները և տեսանյութը պահպանվում են մինչև գույքի վերադարձը):

11. Արձանագրությանը կցվում է նաև գույքը հարկադիր վերցնելու մասին լիազոր մարմնի (մարմինների) որոշման պատճենը:

12. Արձանագրությունը, գույքը հարկադիր վերցնելու մասին լիազոր մարմնի (մարմինների) որոշման պատճենը, ինչպես նաև գույքի լուսանկարները և տեսանյութը տրվում են գույքի օրինական տիրապետողին առձեռն կամ ուղարկվում են պատվիրված փոստով:

13. Այն բացառիկ դեպքերում, երբ գույքի օրինական տիրապետողը կամ նրա գտնվելու վայրը հայտնի չէ, սակայն հաշվի առնելով այդ գույքի օգտագործման հրատապությունը, հնարավոր չէ բավարար միջոցներ ձեռնարկել օրինական տիրապետողին կամ նրա գտնվելու վայրը հայտնաբերելու ուղղությամբ, գույքը կարող է վերցվել անմիջապես՝ առանց սույն հոդվածի 2-12-րդ մասերով սահմանված ընթացակարգերի պահպանման: Գույքը կարող է վերցվել անմիջապես նաև այն բացառիկ դեպքերում, երբ սույն հոդվածի 2-12-րդ մասերով սահմանված ընթացակարգերի պահպանումը և դրանով պայմանավորված գույքի օգտագործման հապաղումը կարող են հանգեցնել ծանր հետևանքների: Սույն մասով նախատեսված դեպքերում, առաջին իսկ հնարավորության ժամանակ, կազմվում է արձանագրություն, որը պետք է պարունակի՝

1) գույքի (նաև դրա վիճակի) հնարավորինս ամբողջական նկարագիրը.

2) գույքի գտնվելու վայրը.

3) գույքն օգտագործելու նպատակը (եթե այն գաղտնի չէ) և հրատապության հիմնավորումը.

4) գույքի օրինական տիրապետողի տվյալները (անունը, ազգանունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը), եթե հայտնի են, իսկ եթե ոչ՝ այն միջոցները, որոնք ձեռնարկվել են դրանք պարզելու համար.

5) գույքը վերցնելու եղանակը և ժամանակը.

6) արձանագրությունը կազմողի անունը, ազգանունը, պաշտոնը և ստորագրությունը.

7) արձանագրությունը կազմելու ժամանակը, վայրը.

8) գույքն օգտագործման վերցնելու գործողությանը մասնագետ ներգրավելու դեպքում մասնագետի անունը, ազգանունը և ստորագրությունը.

9) նշում սույն հոդվածի 17-րդ մասով սահմանված կարգի մասին:

14. Գույքը լուսանկարվում և տեսաձայնագրվում է՝ անհրաժեշտության դեպքում արձանագրողի կամ գույքը հարկադիր կարգով օգտագործման վերցնելու գործողությանը ներգրավված մասնագետի կողմից գույքի որակական ու քանակական հատկանիշների վերաբերյալ մեկնաբանություններով, որի մասին նշում է կատարվում արձանագրության մեջ

(լուսանկարները և տեսանյութը պահպանվում են մինչև գույքի վերադարձը):

15. Օրինական տիրապետողի կամ նրա բնակության վայրը հայտնի դառնալու դեպքում անհապաղ միջոցներ են ձեռնարկվում արձանագրությունը, ինչպես նաև գույքի լուսանկարները և տեսանյութը վերջինիս տրամադրելու համար:

16. Սույն հոդվածով սահմանված կարգով օգտագործման վերցված գույքը վերադարձվում է դրա օրինական տիրապետողին գույքի օգտագործման անհրաժեշտությունը վերանալու և գույքը վերադարձնելու հնարավորություն առաջանալու դեպքում:

17. Գույքն օգտագործելու դեպքում գույքի օրինական տիրապետողին, Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, ժամկետներում և չափով, տրվում է վճար:

Գույքը վերադարձնելու անհնարինության դեպքում դրա օրինական տիրապետողի դիմումի հիման վրա տրվում է համարժեք փոխհատուցում՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, ժամկետներում և չափով: Եթե գույքը վերադարձվում է վնասված, կամ գույքի օգտագործման արդյունքում առաջանում է բաց թողնված օգուտ, ապա գույքի օրինական տիրապետողի դիմումի հիման վրա տրվում է համարժեք փոխհատուցում՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, ժամկետներում և չափով:

18. Սույն հոդվածը չի տարածվում սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 12-14-րդ կետերի հիման վրա տպագրող սարքերի, ռադիոհեռարձակող, ձայնաուժեղացնող տեխնիկական միջոցների, բազմացնող տեխնիկայի, զենքի, զինամթերքի, ռազմամթերքի, թունավոր նյութերի, մարտական և ուսումնական ռազմական տեխնիկայի, պայթուցիկ և ռադիոակտիվ նյութերի ժամանակավոր առգրավման, տրանսպորտային միջոցների ներգրավման դեպքերի վրա:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. հուլիսի 8
Ստեփանակերտ
ՀՕ-75-Ն

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
հունիսի 29-ին

ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի ապրիլի 25-ի Քրեական օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 321.1-321.5-րդ հոդվածներ.

«Հոդված 321.1. Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում գործող միջոցառումները և ժամանակավոր սահմանափակումները խախտելը

1. Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում սահմանված միջոցառումները և ժամանակավոր սահմանափակումները խախտելը, որն անգոյություն է առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանքներ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Հոդված 321.2. Ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող մարմինների և ուժերի գործունեությունը խոչընդոտելը

1. Ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող մարմինների և ուժերի գործունեությունը խոչընդոտելը, որն անգոյությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանքներ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը վեց տարի ժամկետով:

Հոդված 321.3. Ռազմական դրության իրավական ռեժիմի կանոնների խախտման արդյունքում կասեցված տնտեսական գործունեության իրականացումը շարունակելը

1. Ռազմական դրության իրավական ռեժիմի կանոնների խախտման արդյունքում՝ կասեցված տնտեսական գործունեության իրականացումը շարունակելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Հոդված 321.4. Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը

1. Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում տեղեկությունների հրապարակման կամ տարածման կանոնները խախտելը, որն էական վնաս է պատճառել անձանց կամ կազմակերպությունների իրավունքներին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Հոդված 321.5. Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում գույքն օգտագործման տրամադրելու հատուկ կարգն ու պայմանները խախտելը

1...Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում գույքն օգտագործման տրամադրելու հատուկ կարգն ու պայմանները խախտելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. հուլիսի 8
Ստեփանակերտ
ՀՕ-76-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ՆՀ-884-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Արցախի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ՆՀ-884-Ն հրամանագրի 3-րդ կետը լրացնել 6-րդ ենթակետով.

«6) ջրային կոմիտե:»:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

2021թ. հուլիսի 7
Ստեփանակերտ
ՆՀ-2466-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆՀ-108-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Արցախի Հանրապետության կառավարության և պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՆՀ-108-Ն հրամանագրի հավելվածի 105-րդ կետի 4.1-ին ենթակետում «կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին,» բառերից հետո լրացնել «ջրային կոմիտեի նախագահին,» բառերը:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2021թ. հուլիսի 7
Ստեփանակերտ
ՆՀ-2467-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 հուլիսի 2021թ.

N 700-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՑԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 28-ի «Արցախի Հանրապետության ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատելու մասին» N 94 որոշման թիվ 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) 3-րդ կետում «Հանրապետության» բառից հետո լրացնել «Էկոնոմիկայի և» բառերը.

2) 4-րդ կետում «գիտության» բառից հետո լրացնել «, մշակույթի» բառը.

3) 5-րդ, 8-րդ, 17-րդ և 18-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

4) 6-րդ կետում «հարցերի և վերաբնակեցման նախարարության շենք» բառերը փոխարինել «և միգրացիայի հարցերի նախարարության (հասցեներ՝ ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 54 և Կնունյանցների 1) շենքեր» բառերով.

5) 12.1-ին կետում «շենք» բառը փոխարինել (հասցեներ՝ ք. Ստեփանակերտ, Վ. Մամիկոնյան 68 և Ազատամարտիկների 40/1) շենքեր» բառերով.

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12.2-րդ կետով.

«12.2. Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի (հասցեներ՝ ք. Ստեփանակերտ, Խ. Աբովյան 50 և Տ. Մեծ 10) շենքեր».

7) 19-րդ կետում «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» բառերը փոխարինել «Բարձր տեխնոլոգիաների և ռազմավարական պլանավորման կենտրոն» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 հուլիսի 2021թ.

N 701-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 26-ի «Արցախի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 145-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի NN 1, 3.3 աղյուսակների ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի մայիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Աղյուսակ N 1

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՏ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝	-	-	-	-
09			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	1		Նախադպրոցական կրթություն	-	(13 675,9)	(2 114,9)	-
		1	Նախադպրոցական կրթություն	-	(13 675,9)	(2 114,9)	-
		03	Նախադպրոցական հիմնարկներ	-	(13 675,9)	(2 114,9)	-
			ԱՀ կառավարություն	-	(13 675,9)	(2 114,9)	-
	2		Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	-	(39 643,2)	(51 204,2)	-
		1	Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	-	(39 643,2)	(51 204,2)	-
		03	Պետական աջակցություն ԱՀ շրջանների պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություններին	-	(39 643,2)	(51 204,2)	-
			Մարտակերտի շրջանի վարչակազմ	-	(14 795,2)	(14 795,2)	-
			Մարտունու շրջանի վարչակազմ	-	(24 848,0)	(36 409,0)	-
	6		Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	53 319,1	53 319,1	-
		1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	53 319,1	53 319,1	-
		04	Ուսումնական հաստատություններում սովորող ուսանողներին տրվող փոխհատուցում	-	54 643,2	54 643,2	-
			ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	-	54 643,2	54 643,2	-
		15	Դպրոցական բարձր դասարանների աշակերտների և ուսանողների կրակային պատրաստում	-	(1 324,1)	(1 324,1)	-
			ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	-	(1 324,1)	(1 324,1)	-

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N145-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.3 ԱՂՅՈՒՍԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
09	2	1	Մարտակերտի շրջանի վարչակազմ	-	(14 795,2)	(14 795,2)	-
			«Մարտակերտի շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» ՊՈԱԿ	-	(14 795,2)	(14 795,2)	-
			Մարտունու շրջանի վարչակազմ		(24 848,0)	(36 409,0)	
			«Մարտունու շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» ՊՈԱԿ		(24 848,0)	(36 409,0)	
			ԸՆԴԱՄԵՆԸ	-	(39 643,2)	(51 204,2)	-

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 հուլիսի 2021թ.

N 705-Ն

ք. Ստեփանակերտ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԵՎ ԱՆՀԱՅՑ ԲԱՑԱԿԱՅՈՂ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ, 1-ԻՆ ԽՄԲԻ ԱՆԺԱՄԿԵՏ ՀԱՇՄԱՆԴԱՄ ՃԱՆԱԶՎԱԾ ԵՎ (ԿԱՄ) ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) և անհայտ բացակայող ճանաչված անձանց ընտանիքների, 1-ին խմբի անժամկետ հաշմանդամ ճանաչված և (կամ) անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն N1 հավելվածի:

2. Հաստատել Ծրագրի միջոցառումների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն N2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

**2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ
ՄԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ
ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԵՎ ԱՆՀԱՅՑ ԲԱՑԱԿԱՑՈՂ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՆՁԱՆՑ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ, 1-ԻՆ ԽՄԲԻ ԱՆԺԱՄԿԵՏ ՀԱՇՄԱՆԴԱՄ ՃԱՆԱԶՎԱԾ ԵՎ (ԿԱՄ)
ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ**

1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) և անհայտ բացակայող ճանաչված անձանց ընտանիքների, 1-ին խմբի անժամկետ հաշմանդամ ճանաչված և (կամ) անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) նպատակ ունի երեք տարվա ընթացքում լուծել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) և անհայտ բացակայող ճանաչված անձանց ընտանիքների, ինչպես նաև 1-ին խմբի անժամկետ հաշմանդամ ճանաչված և (կամ) անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովման խնդիրը՝ նպաստելով Արցախի Հանրապետությունում նրանց հետագա բնականոն կեցությանն ու գործունեությանը:

2. Ծրագրի խնդիրներն են՝

1) Ծրագրի շահառուների և նրանց հաշվառման սկզբունքների սահմանումը.

2) ծրագրային միջոցառումների իրականացման հիմնական սկզբունքների, ժամկետների և պատասխանատուների սահմանումը.

3) շահառուներին բնակարանների կամ բնակելի տների հատկացման սկզբունքների և պայմանների սահմանումը.

4) Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների սահմանումը:

3. Ծրագրում կիրառվող հասկացություններն են՝

1) **պատերազմական գործողություններ**՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողություններ.

2) **լիազոր մարմին**՝ Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմին.

3) **շահառու**՝ Ծրագրի 5-րդ կետով սահմանված՝ բնակարանային ապահովման կարիք ունեցող անձ կամ ընտանիք.

4) **ընտանիք**՝ ամուսնության, ազգակցության կամ որդեգրման վրա հիմնված մարդկանց խումբ, որի անդամները հաշվառված են նույն բնակության հասցեում և (կամ) փաստացի բնակվում են նույն հարկի տակ և վարում են ընդհանուր տնտեսություն.

5) **բնակարան**՝ բազմաբնակարան բնակելի շենքում բնակության համար նախատեսված և իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնում առանձին ծածկագրով գրանցված կամ համարակալված տարածք.

6) **բնակելի տուն**՝ բնակավայրի տարածքում առանձին հողամասի վրա կառուցված, առանձին փոստային համար ունեցող, բնակելի, օժանդակ և կոմունալ հարմարություններով օժտված, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնում առանձին ծածկագրով գրանցված կառույց.

7) **բնակտարածք**՝ բնակարանը և (կամ) բնակելի տունը.

8) **բնակարանային ապահովման կարիք ունեցող ընտանիք**, որի՝

ա. սեփականության իրավունքով պատկանող բնակտարածքի բնակելի և օժանդակ տարածքների ընդհանուր մակերեսով ապահովվածությունը ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով 12 քառ. մետրից պակաս է,

բ. ինը տարեկանից բարձր տարբեր սեռի անձինք, բացի ամուսիններից, բնակվում են մեկ սենյակում,

գ. անդամը տառապում է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի 2019 թվականի «Անձին առանձին սենյակի կամ լրացուցիչ բնակելի մակերեսի իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» N 44-Ն հրամանով հաստատված հիվանդություններից որևէ մեկով, որի դեպքում նրա

համար պահանջվում է առանձին կամ լրացուցիչ բնակելի մակերես, և որի տրամադրման դեպքում ընտանիքի մյուս անդամներից յուրաքանչյուրին կմնա 12 քառ. մետրից պակաս մակերես.

9) **բնակարանային ֆոնդ**՝ Ծրագրի շրջանակում կառուցված, ինչպես նաև լիազոր մարմնի կողմից ձեռք բերված բնակտարածք.

10) **կառուցում**՝ շինարարական աշխատանքների և միջոցառումների համալիր՝ ուղղված բնակտարածքի շինարարությանը.

11) **հաշվառում հերթացուցակում**՝ Ծրագրի շրջանակում բնակարանային ապահովման նպատակով շահառուի ընդգրկում հերթացուցակում՝ հերթական համարի տակ.

12) **հերթացուցակ**՝ լիազոր մարմնի կողմից հաշվառման վերցված շահառուների վերաբերյալ տվյալներ պարունակող փաստաթուղթ.

13) **արտոնյալ հերթացուցակ**՝ լիազոր մարմնի կողմից հաշվառման վերցված՝ բնակտարածք ստանալու առաջնահերթ իրավունք ունեցող շահառուների վերաբերյալ տվյալներ պարունակող փաստաթուղթ:

2. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2.1. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

4. Ծրագրային միջոցառումները կիրառործվեն Ծրագրի միջոցառումների իրականացման ժամանակացույցին համապատասխան՝ հաշվի առնելով սույն գլխի կետերով սահմանված սկզբունքներն ու պայմանները:

5. Ծրագրի շահառուներն են՝

1) պատերազմական գործողությունների ժամանակ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով զոհված (մահացած) կամ անհայտ բացակայող ճանաչված անձի՝ բնակարանային ապահովման կարիք ունեցող ընտանիքը.

2) պատերազմական գործողությունների ժամանակ Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով 1-ին խմբի անժամկետ հաշմանդամ ճանաչված բնակարանային ապահովման կարիք ունեցող անձը կամ նրա ընտանիքը.

3) պատերազմական գործողությունների հետևանքով բռնազավթված բնակավայրերում 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ՝

ա. հաշվառված և առնվազն վերջին երեք ամիսներին փաստացի բնակված՝ բնակարանային ապահովման կարիք ունեցող անձը կամ նրա ընտանիքը,

բ. առնվազն վերջին երեք տարիներին փաստացի բնակված՝ բնակարանային ապահովման կարիք ունեցող անձը կամ նրա ընտանիքը.

4) 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ Արցախի Հանրապետությունում հաշվառված և առնվազն վերջին երեք ամիսներին փաստացի բնակված և պատերազմական գործողությունների հետևանքով մահացած քաղաքացիական անձի՝ բնակարանային ապահովման կարիք ունեցող ընտանիքը.

5) պատերազմական գործողությունների պատճառած ավերածությունների հետևանքով սեփականության իրավունքով բնակտարածք կորցրած՝ բնակարանային ապահովման կարիք ունեցող անձը կամ նրա ընտանիքը, որի անդամները 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ հաշվառված և վերջին երեք ամիսներին փաստացի բնակվում էին Արցախի Հանրապետությունում:

6. Շահառուի՝ 5-րդ կետով սահմանված փաստացի բնակության հետ կապված հարաբերությունների առանձնահատկությունները սահմանվում են Արցախի Հանրապետության կառավարության կողմից:

7. Շահառուների ցուցակագրումն իրականացվում է Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի (Ստեփանակերտում՝ քաղաքապետարանի) կողմից՝ Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

8. Շահառուների հաշվառումն իրականացվում և ըստ բնակավայրերի ու հասանելիք մակերեսների ընդհանուր ու արտոնյալ հերթացուցակները կազմվում են լիազոր մարմնի կողմից՝ Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

9. Ստեփանակերտ քաղաքում բնակտարածքով ապահովման նպատակով հերթացուցակում հաշվառվում են Ծրագրի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված շահառուները և 3-րդ ենթակետով սահմանված շահառուներից միայն Շուշի ու Հաղրութ քաղաքների բնակիչները՝ ունենալով նախընտրելու իրավունք ստանալ բնակտարածք շրջանային բնակավայրում՝ Ստեփանակերտ քաղաքի փոխարեն:

10. Ծրագրի 5-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված շահառուները բնակտարածքով ապահովվում են իրենց հաշվառման և (կամ) փաստացի բնակության վայրում:

11. Արցախի Հանրապետությունում կառուցապատվող նոր գյուղական բնակավայրերում բնակտարածքով ապահովման նպատակով հերթացուցակում հաշվառումն իրականացվում է վերաբնակեցվող համայնքների ընտանիքները հնարավոր մեկ համայնքում տեղավորելու սկզբունքով՝ հաշվի առնելով նաև շահառուների ցանկությունը:

2.2. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

12. Հաշվառված շահառուներին բնակտարածքով ապահովելու նպատակով ձևավորվում է բնակարանային ֆոնդ՝

1) Ստեփանակերտ քաղաքում բազմաբնակարան շենքերի կառուցմամբ՝ ապահովելով շուրջ 1200 բնակարան:

2) Արցախի Հանրապետության գյուղական բնակավայրերում առնվազն 20 նոր բնակելի թաղամասի կառուցապատմամբ, որի շրջանակում կկառուցվի ավելի քան 2297 բնակելի տուն, որոնք կտրամադրվեն ավելի քան 36 համայնքի տեղահանված բնակիչներին: Այդ բնակելի տներից 1809-ի համար կկառուցվեն հիմքերը, իսկ թեթև կոնստրուկցիաներով դրանց կառուցումը կիրականացվի բարեգործական տարբեր ծրագրերով:

3) Ստեփանակերտ քաղաքի բնակարանների առաջնային շուկայից մոտ 1000 և Երկրորդային շուկայից ավելի քան 500 բնակտարածքի գնմամբ: Առաջնային շուկայից բնակտարածքի 1 քառ. մետրի գնման առավելագույն գին է սահմանվում 360 հազար ՀՀ դրամը, իսկ Երկրորդային շուկայից բնակտարածքի գնման գինը որոշվում է անկախ գնահատողի կողմից գնահատված արժեքի չափով, բայց ոչ ավելի, քան 1 քառ. մետրի դիմաց՝

ա. մինչև 2015 թվականը կառուցված բնակտարածքի համար՝ 240 հազար ՀՀ դրամ,

բ. 2015 թվականից հետո կառուցված բնակտարածքի համար՝ 300 հազար ՀՀ դրամ:

4) Արցախի Հանրապետության շրջանների բնակարանների առաջնային շուկայից մոտ 70 բնակարանի գնմամբ՝ 1 քառ. մետրի առավելագույն գինը 360 հազար ՀՀ դրամ, և Երկրորդային շուկայից շուրջ 1000 միավոր բնակտարածքի գնմամբ և վերանորոգմամբ: Երկրորդային շուկայից մեկ միավոր բնակտարածքի գնման և վերանորոգման ծախսերի ընդհանուր հանրագումարը շրջաններում չպետք է գերազանցի՝

ա. քաղաքային համայնքներում՝ 15 մլն ՀՀ դրամը,

բ. գյուղական համայնքներում՝ 10 մլն ՀՀ դրամը:

13. Կառուցապատման նպատակով Արցախի Հանրապետության գյուղական համայնքների ընտրությունն իրականացվում է՝ հաշվի առնելով համայնքի՝

1) զարգացման հեռանկարային հնարավորությունները:

2) արտադրական և հաղորդակցման (կոմունիկացիոն) ենթակառուցվածքների առկայությունը կամ դրանց ապահովման հնարավորությունները:

3) սոցիալական (առողջապահական, կրթական, մարզական, մշակութային) ենթակառուցվածքների առկայությունը կամ տվյալ համայնքի բնակիչների համար դրանց հասանելիությունը:

14. Ծրագրի շրջանակում ապահովվում է նաև կառուցապատվող բնակավայրերի բարեկարգումը, ենթակառուցվածքների կառուցումը կամ վերանորոգումը (էներգամատակարարում, ջրամատակարարում, ավելի քան 65 կիլոմետր ավտոճանապարհ, ջրատաքացուցիչների տեղադրում և այլն) և բնակտարածքների կահավորումը:

15. Բնակտարածքի կահավորումն իրականացվում է՝ պայմանավորված ընտանիքի անդամների թվաքանակով և գույքի նկատմամբ կարիքով:

**2.3. ԲՆԱԿՏԱՐԱԾՔԻ ՏՐԱՄԱՂՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՄԿՋՔՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

16. Բնակտարածքը շահառուին տրամադրվում է տասը տարի անհատույց օգտագործման իրավունքով, որից հետո նույն բնակտարածքը նվիրատվությամբ տրամադրվում է շահառուին Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

17. Ծրագրի 5-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված շահառուներին բնակտարածքը տրամադրվում է մինչև բռնագավթված տարածքների նրանց մշտական բնակության վայրեր վերադառնալը, իսկ դրա անհնարինության դեպքում գործում է 16-րդ կետի պայմանը:

18. Շահառուին տրամադրվում է ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով շուրջ 16 քառ. մետր ընդհանուր մակերեսով վերանորոգված և կահավորված բնակարան կամ բնակելի տուն՝ տնամերձ հողամասով: Հատկացվող բնակտարածքի ընդհանուր մակերեսը և սենյակների թիվը, կախված շահառուի ընտանիքի անդամների թվաքանակից, որոշվում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգին համապատասխան՝ ելնելով բնակարանային ֆոնդի հնարավորություններից:

19. Շահառուին բնակտարածք տրամադրելու ժամանակ կարող է վերանայվել հերթացուցակում հաշվառման պահին նրան հասանելիք բնակտարածքի մակերեսի չափը՝ ընտանիքի կազմի և (կամ) կարիքների փոփոխման դեպքում:

20. Արցախի Հանրապետության վերահսկողության տակ գտնվող բնակավայրերում սեփականության իրավունքով բնակտարածք ունեցող, սակայն Ծրագրով նախատեսված ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով ընդհանուր մակերեսը չբավարարող և հերթացուցակում հաշվառված Շահառուին բնակտարածք տրամադրվում է՝ նրան սեփականության իրավունքով պատկանող բնակտարածքը Արցախի Հանրապետությանը հանձնելու դեպքում:

21. Համատեղ սեփականության իրավունքով, սակայն ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով Ծրագրով նախատեսված բնակտարածքի մակերեսը չբավարարող բնակտարածք ունեցող և հերթացուցակում հաշվառված շահառուին բնակտարածքի տրամադրումը կատարվում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված պայմաններով:

22. Շահառուին բնակտարածքի տրամադրումն իրականացվում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

3. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

23. Ծրագրի բյուջեն կազմում է ավելի քան 132 մլրդ ՀՀ դրամ, որից ավելի քան 118 մլրդ ՀՀ դրամը նախատեսված է ավելի քան 6000 միավոր բնակտարածքով բնակարանային ֆոնդի ձևավորման և նոր թաղամասերի բարեկարգման ու ենթակառուցվածքների կառուցման համար, ավելի քան 2 մլրդ ՀՀ դրամը՝ էներգամատակարարման և ջրամատակարարման ապահովման, մոտ 6 մլրդ ՀՀ դրամը՝ ճանապարհաշինության, մոտ 6.5 մլրդ ՀՀ դրամը՝ արևային ջրատաքացուցիչների տեղադրման և բնակտարածքների կահավորման նպատակով գույքի ձեռքբերման համար:

24. Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, Արցախի Հանրապետության պետական բյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց
ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Հ/Հ	Միջոցառումը	Նպատակը կամ բովանդակությունը	Պատասխանատու կատարողը և համակատարողը	Ժամկետը
1.	Շահառուների ցուցակագրում	Շահառուների փաստաթղթերի հավաքագրում և ցուցակագրում՝ շահառու ընտանիքների քանակի և նրանց կազմերի վերաբերյալ տեղեկությունների հստակեցում	Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմեր, Ստեփանակերտի քաղաքապետարան, Լիազոր մարմին	Ծրագրի ընթացքում
2.	Կառուցապատվող բնակավայրերի տեղանքների քարտեզագրում	Կառուցվող բնակավայրերի տեղանքների հստակեցում՝ վերաբնակեցվող բնակավայրերի շահառու ընտանիքների առավելագույն քանակի հաշվի առնմամբ	Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտե, Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Լիազոր մարմին	Մինչև 01.08.2021թ.
3.	Կառուցապատվող նոր բնակավայրերի հատակագծերի հաստատում, կառուցապատման աշխատանքների ընդհանուր ծավալների որոշում	Նոր բնակավայրերում կառուցվող բնակելի տների քանակի, սոցիալական ենթակառուցվածքների հաստատում և տարբեր համայնքներում նոր թաղամասերի կառուցման դեպքում՝ առկա ենթակառուցվածքների վերակառուցման, վերանորոգման աշխատանքների կամ նորերի կառուցման անհրաժեշտության հստակեցում	Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտե, Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Լիազոր մարմին	Մինչև 30.12.2021թ.
4.	Շահառուների հերթացուցակների հաստատում	Շահառուների ընդհանուր ու արտոնյալ հերթացուցակների կազմում, յուրաքանչյուր բնակավայրում կառուցվող կամ գնվող բնակարանների և բնակելի տների քանակի և դրանց մակերեսների հստակեցում	Լիազոր մարմին	Մինչև 30.12.2021թ.
5.	<i>Կառուցապատման տարածքներում մասնավոր սեփականատերերից հողամասերի ձեռքբերում և դրանց նկատմամբ պետության սեփականության իրավունքի գրանցում</i>	<i>Կառուցապատման տարածքներում առկա ու սեփականության իրավունքով Արցախի Հանրապետությանը, Արցախի Հանրապետության առանձին համայնքներին չպատկանող հողատարածքների ձեռքբերման հետ կապված բոլոր անհրաժեշտ իրավաբանական և (կամ) այլ գործողությունների իրականացում և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց նկատմամբ պետության սեփականության իրավունքի գրանցման ապահովում</i>	Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտե, Լիազոր մարմին	Մինչև Ծրագրի ավարտը

6.	Կառուցապատման տարածքներում այլ նպատակային կամ գործառնական նշանակության հողերի (առկայության դեպքում) նշանակությունը՝ բնակավայրերի կառուցապատման նշանակության դարձնելը	Կառուցապատման տարածքներում՝ հողամասերի՝ բնակավայրերի կառուցապատման նշանակության ապահովումը	Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտե, Լիազոր մարմին	Մինչև Ծրագրի ավարտը
7.	Կառուցվող բազմաբնակարան շենքերի, բնակելի տների և նոր թաղամասերի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ապահովում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով	Ծրագրով սահմանվող պայմաններին համապատասխան տիպային բնակելի տների, բնակարանների և նոր թաղամասերի՝ փորձաքննությունն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի ապահովում	Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտե, ԱՀ քաղաքաշինության նախարարություն, «Հայաստան» համահայկական հիմնադրամ, Լիազոր մարմին	Մինչև 30.09.2021թ.
8.	Ծրագրով սահմանված բնակարանների և բնակելի տների կառուցման աշխատանքների ապահովում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով	Ծրագրի շրջանակում անհրաժեշտ քանակով բնակարանների և բնակելի տների կառուցում	Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, «Հայաստան» համահայկական հիմնադրամ, բարեգործական այլ սուբյեկտներ	Մինչև Ծրագրի ավարտը
9.	Բնակելի տների հիմքերի կառուցում	Թեթև կոնստրուկցիաներով բնակելի տների կառուցման համար հիմքերի շինարարություն	Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, «Հայաստան» համահայկական հիմնադրամ	Մինչև Ծրագրի ավարտը
10.	Բնակելի թաղամասերի բարեկարգում, ենթակառուցվածքների կառուցում և (կամ) վերանորոգում	Անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովում	Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, «Հայաստան» համահայկական հիմնադրամ, բարեգործական այլ սուբյեկտներ	Մինչև Ծրագրի ավարտը
11.	Ստեփանակերտում և շրջաններում բնակտարածքի գնում առաջնային և երկրորդային շուկաներից	Բնակարանային ֆոնդի ձևավորում Ստեփանակերտում և շրջաններում՝ գնման միջոցով	Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտե, Լիազոր մարմին	Մինչև Ծրագրի ավարտը
12.	Ստեփանակերտում և շրջաններում երկրորդային շուկայից գնված վերանորոգման ենթակա բնակելի տների վերանորոգում	Գնված բնակարանային ֆոնդի վերանորոգում	Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Լիազոր մարմին	Մինչև Ծրագրի ավարտը
13.	Բնակտարածքների կահավորում գույքով և կենցաղային տեխնիկայով	Ձևավորված բնակֆոնդի կահավորում անհրաժեշտ գույքով և կենցաղային տեխնիկայով	Լիազոր մարմին	Մինչև Ծրագրի ավարտը
14.	Բնակտարածքների տրամադրում շահառուներին	Բնակտարածքների տրամադրում շահառուներին՝ կազմված հերթացուցակներին համապատասխան	Լիազոր մարմին	Մինչև Ծրագրի ավարտը

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

5 հուլիսի 2021թ.

N 715-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ք ն շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 28-ի «Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունների, երկրաբանական ուսումնասիրության համաձայնության ձևերը հաստատելու մասին» N 19-Ն որոշմամբ հաստատված NN 1, 2 և 3 հավելվածներում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերով, իսկ «ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ» բառերը փոխարինել «ՆԱԽԱՐԱՐ» բառով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 28-ի «Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 21-Ն որոշմամբ հաստատված NN 1 և 2 հավելվածներում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը՝ ի դեմս վարչության պետ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը՝ ի դեմս նախարար» բառերով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին երկրաբանական տեղեկության պահպանության կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 29-ի N 134 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 194-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը» բառերով, իսկ «՝ «Արցախի երկրաբանական էքսպեդիցիա» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով» բառերը հանել:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի «Պինդ օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների և կանխատեսումային պաշարների դասակարգումը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 26-ի N 223 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 195-Ն որոշմամբ հաստատված հավելվածի՝

1) 12-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման գործակալության (այսուհետ՝ գործակալություն)» բառերը փոխարինել «Արցախի

Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ նախարարություն)» բառերով.

2) 44-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում և 48-րդ կետի 3-րդ ենթակետում «գործակալություն» բառի համապատասխան հոլովածները փոխարինել «նախարարություն» բառի համապատասխան հոլովածներով:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի «Երկրաբանական տեղեկության հանձնման կարգը սահմանելու մասին» N 197-Ն որոշմամբ սահմանված հավելվածի՝

1) 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը» բառերով.

2) 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3) Ձև-ում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն» բառերը և նրանց համապատասխան հոլովածները փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն» բառերով և նրանց համապատասխան հոլովածներով:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 5-ի «Հազվագյուտ երկրաբանական մերկացումների, հանքաբանական գոյացումների, հնէաբանական օբյեկտների ու գիտական և գիտամշակութային հատուկ արժեք ներկայացնող ընդերքի մյուս տեղամասերի կարգավիճակը և պահպանության կարգը սահմանելու մասին» N 522-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը» բառերով:

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 5-ի «Օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների պետական կադաստրի վարման կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 30-ի N 15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը» բառերով:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 7-ի «Ընդերքօգտագործման իրավունքի երաշխիքային հավաստագրի տրամադրման կարգը հաստատելու մասին» N 740-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Հավաստագիրը տրամադրում է Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հետ:».

2) 8-րդ և 11-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն» բառերի համապատասխան հոլովածները փոխարինել «Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե» բառերի համապատասխան հոլովածներով.

3) Ձև N 2-ում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ» բառերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար» բառերով:

9. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 30-ի «Ուսումնասիրված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկության պետական ընդերքաբանական փորձաքննության կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 5-ի N 520-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 722-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ կետում և 6-րդ կետի 2-րդ ենթակետում «զարգացման» բառը փոխարինել «ենթակառուցվածքների» բառով:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

5 հուլիսի 2021թ.

N 716-Ն

ք. Ստեփանակերտ

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը և «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ 2020 թվականին Արցախի Հանրապետության դեմ սանձագերծված պատերազմական գործողությունների արդյունքում տեղահանման պատճառով գյուղատնտեսական տեխնիկան, կցանքները, ճանապարհաշինարարական, շինարարական ու այլ մեքենամեխանիզմները և (կամ) դրանց վերաբերյալ փաստաթղթերը կորցրած քաղաքացիների փոխարեն մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվում են հետևյալ ծառայությունների համար սահմանված պետական տուրքերի վճարումները

1) գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների վարման իրավունքի վկայականի կրկնօրինակը տալու համար.

2) ոչ ինքնագնաց գյուղատնտեսական մեխորատիվ, հիդրոմեխորատիվ մեքենաների և սարքավորումների կորցրած տեխնիկական վկայագրի կրկնօրինակը տալու համար.

3) գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների, ինքնագնաց ճանապարհաշինարարական, շինարարական և այլ մեքենամեխանիզմների կորցրած պետական համարանիշները վերականգնելու համար.

4) գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների, ինքնագնաց ճանապարհաշինարարական, շինարարական և այլ մեքենամեխանիզմների կորցրած տեխնիկական անձնագրերի (գրանցման վկայականների) կրկնօրինակը տալու համար.

5) տրակտորային կցանքների, ինքնագնաց ճանապարհաշինարարական և այլ մեքենամեխանիզմների կցորդների և կիսակցորդների պետական համարանիշները վերականգնելու համար.

6) գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաները, ոչ ինքնագնաց գյուղատնտեսական մեխորատիվ, հիդրոմեխորատիվ մեքենաները, սարքավորումները, ինքնագնաց ճանապարհաշինարարական, շինարարական և այլ մեքենամեխանիզմները գրանցելու, վերագրանցելու, հաշվառումից հանելու, ինչպես նաև դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ կապված որևէ գործողություն կատարելու համար:

2. Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարին ու Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ն Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել հաշվետվություն սույն որոշման 1-ին կետում նշված պետական տուրքերի չափերի վերաբերյալ:

3. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված հաշվետվությունն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել Արցախի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից սույն որոշման 1-ին կետում նշված պետական տուրք

վճարողների փոխարեն Արցախի Հանրապետության կառավարության կողմից վճարման ենթակա պետական տուրքերի վճարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի նոյեմբերի 10-ից ծագած հարաբերությունների վրա:

5. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը սույն որոշման 1-ին կետով նախատեսված դեպքերում քաղաքացիների կողմից վճարված պետական տուրքերը ենթակա են վերադարձման:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

5 հուլիսի 2021թ.

N 717-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 556 ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ոքոշուվ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» N 556 որոշմամբ հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) 21-րդ կետում «:» կետադրական նշանը հանել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 22-րդ կետ՝

«22. 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով զոհված քաղաքացիական անձանց ընտանիքի անդամներ (ամուսին, ծնողներ, մինչև 23 տարեկան զավակներ)»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

8 հուլիսի 2021թ.

N 729-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 23-րդ հոդվածը և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. 2021 թվականի հուլիսի 12-ի աշխատանքային օրը տեղափոխել 2021 թվականի հուլիսի 17-ը՝ շաբաթ օրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«29» հունիսի 2021թ.

N 139

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ
ԱՎՏՈՄՈՒԲԻԼՆԵՐՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈՒՄԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱՂԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 29-ի N 376-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ՝

1. Դադարեցնել՝

1) **անհատ ձեռնարկատեր Արսեն Իվանի Կարապետյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕՈ00305 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

2) **ֆիզիկական անձ Արկաղի Ռաֆայելի Մարդարյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕՈ00672 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները.

3) **ֆիզիկական անձ Էդիկ Սուրենի Գաբրիելյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՕՈ00593 լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունը:

2. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

Հայկ Խանումյան

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» ապրիլի 2021թ.

N 20

ք. Ստեփանակերտ

**«ԱՐՏ-ԱԼԿՈ» ՄԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-ԻՆ ՏՐՎԱԾ
ՊԼ-0366 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 7-րդ մասով և հիմք ընդունելով «ԱՐՏ-ԱԼԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (գտնվելու վայրը՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Հեքիմյան փողոց, շենք 10/8, ՀՎՀՀ՝ 90041653) կողմից ներկայացված դիմումը, ինչպես նաև Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության լիցենզավորող հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Ուժը կորցրած ճանաչել «ԱՐՏ-ԱԼԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ակոհոլային խմիչքների արտադրության ՊԼ-0366 լիցենզիան:

Գ.Ի.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» ապրիլի 2021թ.

N 21

ք. Ստեփանակերտ

**«ՊԻԱՆԿ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 25-րդ հոդվածով և հիմք ընդունելով «ՊԻԱՆԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (գտնվելու և գործունեության իրականացման վայրը՝ ԱՀ, Ասկերանի շրջան, գյուղ Խրամորթ, ՀՎՀՀ՝ 90074194) կողմից ներկայացված լիցենզիա ստանալու դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

«ՊԻԱՆԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել ՊԼ-0379 համարի տակ՝ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ակոհոլային խմիչքների արտադրության լիցենզիա:

Գ.Ի.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«11» հունիսի 2021թ.

N 29

ք. Ստեփանակերտ

**«ՄԻԿԱ-ՀԱՂԲՈՒԹ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2003
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 21-ԻՆ ՏՐՎԱԾ ՊԼ-0065 ԼԻՑԵՆԶԻԱՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 7-րդ մասով և հիմք ընդունելով «ՄԻԿԱ-ՀԱՂԲՈՒԹ» փակ բաժնետիրական ընկերության (գտնվելու վայրը՝ ԱՀ, Հաղբութի շրջան, ք. Հաղբութ, Ա. Մկրտչյան փողոց, շենք 4, ՀՎՀՀ՝ 90281869) կողմից ներկայացված դիմումը, ինչպես նաև Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության լիցենզավորող հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Ուժը կորցրած ճանաչել «ՄԻԿԱ-ՀԱՂԲՈՒԹ» փակ բաժնետիրական ընկերության գինու, ինձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրության ՊԼ-0065 լիցենզիան:

Վ. Բ. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ